379
4-78

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
«ԿՈՐՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ» ԸՆԿ. ԿԵՆՏ.
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
„ԿՈՐՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ"
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՅԵՎԵՎԱՆ 1927

06 APR 2010

Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
«ԿՈՐՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ» ԸՆԿ. ԿԵՆՏ.
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
„ԿՈՌՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ“
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1927

24 MAY 2013

54.801

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 1592.
ԳՐԱՌ. 12 Բ., ՏԻՐԱԺ 2500

Սույն կանոնադրությունը հաստատված է Ներքգործժողկոմատի կողմից 11-ին հունվարի 1927 թ.

Ներքգործժողկոմ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

Ի. ա. վարչ. վարչության պետ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Դիվանապետ (ստորագրություն)

«ԿՈՐՉԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. *Անգրագիտության և յերկրի կուլտուրական հետամնացության դեմ պայքարելն աշխատավորության լայն խավերի և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության գիտակից քաղաքացիների գործն է։*

Կուլտուրական հետամնացության և առանձնապես անգրագիտության ու կիսագրագիտության վերացման գործին ոգնելու նպատակով՝ կազմակերպվում է «Կորչի անգրագիտությունը» ընկերությունը։

2. *Ընկերությունն իր գործունեության ընթացքում պետք է աջակցի պետական օրգաններին անգրագիտության վերացման աշխատանքներում։*

3. *Ընկերությունը մղում է լայն ագիտացիա հօգուտ անգրագիտության վերացման՝*

ա) ոգնում է անգրագիտության վերացման Կենտրոնական Արտակարգ Հանձնաժողովին, լիկկայանների կահավորման և ուսումնական պիտույքներ ձեռք բերելու գործում։

բ) դասագրքերի ընթերցանության, մեթոդական ձեռնարկների հրատարակման գործում։

գ) անգրագիտության վերացման կայանների ցանցի գործում։

4. Ընկերությունը գործում է Հ. Ա. Ս. Հ. մասնաստով։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՋԻՋՆԵՐԸ

1. Ընկերության հիմնական կազմակերպությունը համարվում է բջիջը. բջիջը կազմակերպվում է այն ժամանակ, երբ անդամների թիվը 3-ից պակաս չէ։

2. Ընկերության բջիջը կարող է կազմակերպվել խրճիթ-ընթերցարաններին, ակումբներին, գրադարաններին, գյուղխորհուրդներին, կուսակցության և կոմյերիտբջիջներին, կոոպերատիվներին, կոմունաներին, կոլեկտիվներին, զինվորական զորամասերին կից և այլն։

3. Բջիջը կարող է կազմակերպվել կուսակցության, Կոմյերիտմիության, արհեստակցական, հասարակական և խարհրդային մարմինների, ինչպես նաև ընկերության բջիջի ու նրա առանձին անդամի նախաձեռնությամբ։

4. Ընկերության բջիջները պարտավորվում են իրենց առաջա աշխատանքները համաձայնեցնել ընկերության համապատասխան ճյուղերի և քաղլուսորդանների գործունեությանը։

5. Ընկերության բջիջի մեջ ընդունվում են այն անհատները, որոնք ցանկություն են հայտնում աշխատելու բջիջում և որոնք ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն։

Ընկերության բջիջի անդամ կարող են լինել 15 տարին լրացրած քաղաքացիները, դատարանով չդատապարտվածները, ինչպես նաև պետական, տնտեսական, արհեստակցական, կոոպերատիվ և խառը տիպի կազմակերպությունների իրավական դեմքերը։ Դրանք մասնակցում են ընկերության աշխատանքներին իրենց հիմնարկների ներկայացուցիչներ։

Ծանոթություն.—Աշակերտները կարող են լինել բջիջի անդամ 13 տարեկանից։

6. Բջիջը կարող է ցրված համարվել՝

ա) երբ վորոշումը տեղի չի ունենում անդամների ընդհանուր քանակի կեսից վոչ պակաս.

բ) ընկերության համապատասխան կազմակերպության վորոշմամբ։

գ) բջիջի ցրման դեպքում նրա ամբողջ ունեցվածքը մնում է ընկերության համապատասխան կազմակերպության։

7. Բջիջը գործում է ընկերության կանոնադրության սահմաններում։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՋԻՋԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԸ

1. Ընկերության բջիջի վարչական որգանները հետևյալներն են՝

ա) ընդհանուր ժողովը.

բ) Բջիջի նախագահությունը։

2. Բջիջի ժողովը հրավիրվում է վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ. ընդհանուր ժողովը կարող է գու-

ժարվել նաև բջիջի Վերստուգիչ Հանձնաժողովի պահանջմամբ։ Ընդհանուր ժողովին նախագահում է բջիջի անդամներից մեկն ընտրված ձայների մեծամասնությամբ։ Վորոշումները և բանաձևերն ընդունվում են անդամների ձայների մեծամասնությամբ։

3· Ընդհանուր ժողովն ընտրում է՝

ա) Բջիջի նախագահություն· բ) Վերստուգիչ Հանձնաժողով· գ) Սեկցիաներ—կազմակերպչական, ագիտացիոն, ֆինանսական և դպրոցական։ Հաստատում է բջիջի աշխատանքների նախագիծը, լսում է բյուրոյի և Վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումները։

Ծանոթություն.—Սեկցիաներն ընտրվում են միայն քաղաքներում։

4· Ընդհանուր ժողովն որինական է համարվում յերբ ներկա յեն անդամների կեսը կամ ավելին։ Հակառակ դեպքում նշանակված ժամից կես ժամ հետո՝ ընդհանուր ժողովը համարվում է յերկրորդ անդամ հրավիրված և որինական է լինում անկախ ներկա յեղող անդամների թվից։

5· Յուրաքանչյուր բջիջ, վոր ունի 10-ից պակաս անդամ, ընտրում է մեկ ներկայացուցիչ—լիազոր, իսկ 10 կամ ավել՝ նախագահություն։

6· Բջիջի նախագահությունն իր միջից ընտրում է քարտուղար, նախագահ և գանձապահ։

7· Բջիջի նախագահությունը պարտավորվում է բջիջի ամսական գործունեության մասին համապատասխան վարչությանը ներկայացնել մանրամասն զեկուցում, վոչ ուշ քան հաջորդ ամսվա 5-ը։

ԲՋԻՋԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1· Բջիջի բոլոր անդամները պետք է ակտիվորեն աշխատեն՝ ա) լիկվիդացիայում կամ անդրագիտության վերացման աջակցող մի վորևե կազմակերպության մեջ, իսկ կարող ուժերն անհատական, խմբակային դասավանդման կարգով պարապում են անդրագետների հետ։ բ) Առանձին հերթապահներ ունենան որվա վորոշ ժամերին Փոստ-հեռագրատանը, դատարաններում, գյուղխորհուրդներում, հիվանդանոցներում և այլ հասարակական վայրերում ոգնության գալու նպատակով՝ գրելով հասցեներ, նամակներ, դիմումներ և այլն վորը և կաջակցի միաժամանակ ընկերության մեջ նոր անդամներ գրավելու ագիտացիային։

2· Քաղաքային բջիջների անդամներն առորյա հանձնարարությունների ժամանակ (նաև արձակուրդների) պարտավորվում են աշխատանքը համաձայնեցնել անդրագիտության վերացման տեղական որգաններին։

3· Ընկերության մեջ մտնելու ժամանակ անդամները մուծում են մուտքի վճար և հետագայում շարունակաբար վճարում են անդամավճար, վորը և նշանակվում և անդամագրքույկի մեջ համապատասխան դրոշմարի դրոշմանիշներ փակցնելու։ Մուծումները սահմանվում են հետևյալ չափով՝ ա) մուտքի վճար · 3 կ·

բ) անդամավճար ամսական ծառայողների համար . . . . . 5 կ·

գ) բանվորների—գյուղացիների համար · · 3 »

դ) ուսանողների (համալսարանի և բոլոր դպրոցների) . . . . . 2 կ·

յե) գործաղուրկներն ազատվում են անդամավճար մուծելուց։

զ) Հրամանատարական և քաղաքական կազմին չը-պատկանող կարմիր բանակայիններն ազատվում են անդամավճար մուծելուց։

է) Կարմիր բանակի հրամանատարական և քաղաքական կազմի պատկանողներն անդամավճար մուծում են ծառայողներին հավասար հիմունքներով։

ը) Միասնական հարկից ազատված գյուղացիներն անդամավճար մուծելուց կարող են ազատվել բջիջի ընդհանուր ժողովի վորոշմամբ։

թ) Մուտքի վճարը պարտադիր է բոլորի համար։ Մուծումների ժամկետները (ժամանակամիջոց) սահմանվում են ընկերության տեղական կազմակերպությունների կողմից։

ժ) Մուտքի վճարը մուծելուց հետո ընկերության անդամները ստանում են անդամակցական տոմս։

4· Ընկերության անդամները հեռացված են համարվում՝ ա) ինքնակամ հեռանալու դեպքում· բ) ընկերության տեղական բաժանորդների սահմանած ժամանակամիջոցում անդամավճար չը մուծելու դեպքում· գ) ընկերության բջիջի—անդամների ընդհանուր ժողովի 2/3 վորոշմամբ, յերբ հեռացվողը դեպի Ընկերությունը ցույց է տվել չարակամ վերաբերմունք, կամ քրեական հանցանք է կատարել։

Ծանոթություն.—4 կետին—Ընկերությունից հեռացնելու վորոշման դեմ կարելի յե բողոքել Ընկերության ավելի բարձր մարմնին։

5· Այն անհատները, վորոնք վեց ամսվա ընթացքում անդամավճար չեն տալիս, համարվում են Ընկերությունից մեքենայորեն դուրս մնացած։

6· Սույն կանոնադրությամբ նախագծված աշխատանքին բջիջը, ինչպես նաև նրա յուրաքանչյուր անդամը, մասնակցում է հետևյալ ձևերով՝ որինակ·

1) Անդրադիտության ռեցիդիվի դեմ պայքարելու նպատակով բջիջը լիկկայան ավարտողին տեղավորում է կիսադրագետների դպրոցում կամ կիսադրագետների խմբակներում, կցում է խրճիթ-ընթերցարանների աշխատանքներին, մասնակցել է տալիս պատի լրագրին, բերել է տալիս լիկկայանների կամ կիսադրագետների դպրոցների համար «Մահկալ» սովորողներին, ավարտողներին անհատականորեն կամ կոլեկտիվ կերպով բաժանորդագրել է տալիս «Մահկալ»-ին և մյուս թերթերին։

2) Ստեղծում է համապատասխան նպաստավոր պայմաններ գոյություն ունեցող լիկկայաններում, կիսադրագետների դպրոցներում կանոնավոր պարապմունքներ ունենալու համար։

3· Աջակցում է հասակավորների և անչափահասների Անդրադիտության Վերացման գործին, յերբ այդ նպատակի համար հասարակության կողմից նախաձեռնություն է հայտնաբերվում։

4· Աջակցում է դպրոցների կառուցման գործին, յերբ կա գյուղացիների կողմից նախաձեռնություն։

5· Լայն ագիտացիա յե տանում Անդրադիտության Վերացման և «Կորչի Անդրադիտությունը» Ընկերու-

թյան խնդիրները պարզաբանելու համար իր հիմնարկի, ձեռնարկի բանվորների միջև և իր գյուղում։

6. Ագիտացիա յէ տանում «Կորչի Անգրագիտությունը» Ընկերության մեջ նոր անդամներ գրավելու համար, առանձնապես քաղաքի բանվորներից, գյուղի բատրակներից, չքավոր ու միջակ գյուղացիներից։

7. Խիստ հսկողություն է սահմանում լիկկայանների և անհատական խմբակային պարապմունքների հաճախումներին և միջոցներ է ձեռք առնում անկանոն հաճախումներին վերջ տալու համար։

8. Հոգ է տանում Անգրագիտության վերացնողի և ուսուցչի աշխատանքի պայմանները լավացնելու, լիկկայաններին ու դպրոցներին նորմալ ձևով ու ժամանակին գրենական ու դասական պիտույքներ, վառելիք, լուսավորություն և այլն մատակարարելու համար։

9. Աշխատանքի բաշխում է կատարում անդամների մեջ, տալով յուրաքանչյուր անդամին որոշ հանձնարարություն Անգրագիտության Վերացման ասպարեզում կատարելու։

10. Կապ է հաստատում տեղական բոլոր կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ Հ. Կ. (Բ.) Կ., Հ. Լ. Կոմյերիտ. բջիջների, գործարկոմների, տեղկոմների, գործարանային վարչությունների, քաղլուսկազմակերպությունների, դպրոցների և հասարակական այլ կազմակերպությունների հետ։

11. Պատի լրագրներում և տեղական մամուլում լուսաբանում է բջիջի աշխատանքները, ինչպես նաև օգտագործում է տեղի ունեցող բոլոր ժողովները «Կորչի Անգրագիտությունը» Ընկերությանը ժողովրդականացնելու նպատակով։

12. Իրենց կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար ազգաբնակության կողմից նկատված բոլոր ձևերին աջակցություն է հասնում։

ԲՋԻՋԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Բջիջի ֆոնդը կազմվում է՝ ինքնակամ նվիրատվություններից, անդամավճարներից, յերեկույթներից, ներկայացումներից, հանգանակությունից, գրականության և կրծքանշանների վաճառումից, չեֆկոմիտեյի կողմից Անգրագիտության Վերացման համար հատկացված գումարից, Փոկից և այլն։

Ծանոթություն.—Նվիրատվությունների և գանձումների ժամանակ, թե նվիրաբերողը և թե ստացողը փոխադարձ կերպով ստանում են պատշաճ ստացականներ։ Նվերներ հավաքողները պարտավորվում են հավաքված գումարի հետ միասին համապատասխան մարմնին (բջիջի գանձարկղին) ներկայացնել նաև ստացականների արմատները, կամ ստացված գումարը հաստատող ուրիշ փաստաթուղթ։

2. Բջիջի միջոցները ծախսվում են՝ իր կողմից բացված լիկկայանների, կիսագրագետների դպրոցի կահավորման, գրենական ու դասական պիտույքների, ուսուցչի վարձատրության ու լրագրի բաժանորդագրության, վառելիքի ու լուսավորության վրա։

3. Անդամավճարների 5 տոկոսը և մյուս գանձումների 15 տոկոսը բջիջը պարտավորվում է մուծել Ընկերության գավվարչության գանձարկղը։

Նշանակություն.—Քաղաքային բջիջները Գավվարչության գանձարկղն են մուծում, յերբ նրանց հաշվին լիկվայան չկա, ամբողջ մուտքի 75 տոկոսը։

ԲՋԻՋԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

1. Բջիջի վերստուգիչ հանձնաժողովը վեց ամիսը մեկ անգամ ստուգում է գանձարկղն ու բջիջի դրամային հաշվետվությունը և արդյունքների մասին զեկուցում է բջիջի ընդհանուր ժողովին և բարձրագույր մարմնին (դրավոր)։

ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. «Կորչի Անդրադիտությունը» Ընկերության կազմակերպչական սիստեմը բջիջային է։

2. Շրջաններում 10 բջիջ կազմակերպվելու դեպքում քաղլուսակոմիտեյին կից կազմվում է Ընկերության շրջանային բյուրո։ Տերիտորյալ կերպով Գավկենտրոնի մեջ ընկնող շրջանն առանձին շրջբյուրո չի ունենում, նա անմիջապես յենթարկվում է Գավվարչության։

3. Ընկերության ժամանակավոր գավվարչությունը գավառում մոտ 20 բջիջ գոյություն ունենալու դեպքում հրավիրում է ընդհանուր ժողով ու տալիս է իր հաշվետու զեկուցումը, վորից հետո ընտրվում է տեղական վարչություն (7 անդամ 3 թեկնածու)։

4. 2-րդ աստիճանի դպրոցներին, տեխնիկումներին, յոթնամյա գյուղատնտեսական դպրոցներին, Ցեբևանում չդանվող բանֆակներին, կուսդպրոցներին, խորհրդային հիմնարկների կոլեկտիվներին և նման հիմնարկներին կից, ինչպես նաև գյուղերում կազմակերպված բջիջները յենթարկվում են Ընկերության համապատասխան գավառային կամ շրջանային վարչությանը։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԱՎՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Կորչի Անդրադիտությունը» Ընկերությունը բոլոր գավկենտրոններում ունենում է իր գավվարչությունները, վորոնք միացնում են ավյալ գավառի ամբողջ աշխատանքները։

2. Ընկերության գավվարչություններն ընտրվում են ընդհանուր գավառային կոնֆերանսում, բաղկացած 10 հոգուց (7 անդամ, 3 թեկնածու), ունենում են նախագահություն, բաղկացած նախագահից, քարտուղարից և գանձապահից։ Նրանք զեկավարվում են գավառային աշխատանքներն Ընկերության գծով։

3. Գավառային ներկայացուցչական կոնֆերանսը հավաքվում է տարեկան մեկ անգամ և որինական և համարվում, յերբ ներկա յեն լինում հրավիրված անդամների կեսից ավելին։

4. Ընդհանուր կոնֆերանսը քննում է անցյալ գործունեությունը և մշակում առաջիկա գործունեության նախագիծը։

5. Գավառային վարչություններն ունենում են գավվերստուգիչ հանձնաժողովներ (տես վերստուգիչ հանձնաժողովների մասին)։

6. Գավվարչության միջոցներն են կազմում՝ ա) բջիջներից ստացվող տոկոսները.

բ) իր կողմից կազմակերպված յերեկույթներից, հանգանակներից ստացած գումարները.

գ) գավմարմինների տոկոսային հատկացումները և պարբերական նվերները, կրծքանշանների ու գրականության վաճառքի արդյունքները։

7. Գավվարչություններն իրենց գանձարկղի մուտքի գումարներից 15 տոկոսն ուղարկում է ընկերության կենտրոնական վարչությանը։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

1. Ընկերության բարձրագույն օրգանը հանդիսանում է Համահայաստանյան համագումարը։

2. Համագումարները լինում են՝ ա) հերթական, վորոնք հրավիրվում են կենտրոնական վարչության կողմից տարին մեկ անգամ. բ) արտակարգ, վորոնք հրավիրվում են կենտրոնական վարչության կամ վերստուգիչ հանձնաժողովի և կամ ընկերության ճյուղերի մեկ հինգերորդի պահանջմամբ։

3. Համահայաստանյան համագումարն օրինական է համարվում, յերբ մասնակցում են ընկերության անդամների ներկայացուցիչների կեսից ավելին։

4. Ընկերության կենտրոնական վարչությունն ընտրվում է համագումարի կողմից (13 անդամ, 5 թեկնածու) մեկ համագումարից մինչև մյուս համագումարը. տևող ժամանակաշրջանում հանդիսանում է ընկերության բարձր գործադիր մարմինը։

5. Կենտրոնական վարչությունը ընտրում է նախագահություն, բաղկացած 5 անդամից և 2 թեկնածուից. նախագահությունն իր միջից ընտրում է նախագահ, փոխնախագահ, քարտուղար և գանձապահ։

6. Կենտրոնական վարչությունը հավաքվում է 3 ամիսը մեկ անգամ, իսկ նախագահությունն ամսական վոչ պակաս քան յերկու անգամ և ղեկավարում է տեղական ճյուղերի գործունեությունը, նրանցից ստանալով յեռամսյա զեկուցումներ և փոխադարձաբար ուղարկելով հրահանգներ և ցուցմունքներ, պատրաստվում է Համահայաստանյան համագումարին զեկուցելու ընկերության գործունեության դրամային հաշվետվության և առաջիկա գործունեության նախագծի և նախահաշվի մասին։

7. Կենտրոնում և տեղերում անգրագիտության վերացման արտակարգ հանձնաժողովի ներկայացուցիչը, վարչության և նախագահության ժողովներին մասնակցում է վճռողական ձայնով։

8. Կենտրոնական և գավառային վարչություններն իրավասու յեն սույն կանոնադրության սահմաններում հրատարակել համապատասխան հրահանգներ, կնքել պայմանագրեր, բացել փոխատվություններ և հարաբերության մեջ մտնել պետական և հասարակական մարմինների հետ։ Ընկերության 2/3-ից ավելի անդամներին հրաժարման դեպքում ընկերությունը համարվում է լուծված, իսկ գույքը մնում է Անգրագիտության Վերացման Կենտրոնական Արտակարգ Հանձնաժողովին։

ՎԵՐՄՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

1. Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովը՝ 3 հոգուց բաղկացած մեկ թեկնածուով ընտրում է Համահայաստանյան համագումարի կողմից մեկ տարով, մինչև պատասխանատու Համահայաստանյան համագումարի առաջ, վարին և ներկայացնում է զեկուցում ընկերության գործունեության մասին։

2. Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի պարտականությունն է՝

ա) հետևել կենտրոնական վարչության հաշվետվության կանոնավոր տանելուն և ստացվածքին։

բ) Հետևել, վորպեսզի ընկերության կենտրոնական վարչությունը կանոնադրությունից չեղումներ չանի։

գ) Անհրաժեշտության դեպքում (կենտրոնական վարչության հապաղումների ժամանակ) հրավիրել ընդհանուր ժողովներ։

3. Գավառային վարչություններին կից գավառային վերստուգիչ հանձնաժողովներն ունեն նույն պարտականությունները, ինչ վոր կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0235789

54.801

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊԵԿ